



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԱՌԱԽԵՄՆԱՎՈՒՐԱԿԻՒԹԻՒՆ
ՇԱՐԱԿԱՆԱՑ ԽԱԶԻՑ

ԱԱՆԻ՛ յարգելի է ո՞ր և է նշխար նախնեաց մերոց՝ որ ի սպառիշ ճիրանաց ժամանակին ազատած՝ կը հասնի մինչ առ մեզ. և որչափ պարտական ենք չար ժամանակաց ձեռքեն փրկիլ մեր նախրականըը, ոչ միայն ամենայն ինաւ մով պահելով, այլ և մեծաջան ըննութեամբ ճգնելով ուսումնասիրել: Այս նշխարաց մին է նաև ազգային երաժշտութիւնը, որ իր խաղերու ձեւերով, մինչ առ մեզ հասեր է ի ձեռն եկեղեական զրոց. թշուառաբար իրենց զիսութիւնը պարզող՝ կատարեալ զրուած մի ի նախնեաց զանուեցաւ ցայսօր, որով անոնց զրայ ունեցած զիտութիւնիս, զիհաւորաբար երգեցողութեան ուսուցչութեամբ է աւանդութեամբ է միայն: Արտաքին երգոց զրութիւնը եւս նոյն խաղերով կը

գրուէին, չունենալով այլ նշանագիր, ինչպէս կ'երեւ ի ձեռագիր Մանր-ուսումնան:

Թէ որչափ բարձր տեղի կը բռնէ երգը և երգեցողութիւնը ընդհանուր մարզկութեան մոտաց և սրտից վրայ յայս է ամենուն, ապա մեծի հետագօտութեան արժանի համարուելու է այսպէս ի մման մացեալ այսպահ կարեւոր մասն մի զիտութեան. և այնչափ առաւել՝ որչափ մեր երանաշնորհ մեծ հայրապետաց հանճարեղ մոտաց արգասիին է, և նոցա համբուրեղի նշխարաց անծանօթ մացեալ աւանդմի, և մեր տաճարաց յափրտակիշ զրադն:

Եղան արգարեւ ի ոկիզրն զարւու ճարտար երգիշ և երգահանք, որց անկատար գտնելով ի նախնեաց առ մեզ հասած խաղերը, զովելի ճամանի փափաքեցան եկեղեցական երգեցողութեան կատարեալ նշանաձեւը ստեղծել. և հնարեցին և յօրինեցին հայկական երաժշտութեան կանոնը և նշանաձեւը եւ ցայսօր աղքային եկեղեցին ու նեցաւ յաջորդաբար իրեն տալանդաւոր երգահանքն, որց իրենց յատուկ կամ նմանաձեւ նշանօց ու կանոնօց ի զրի առին և ուսուցին զերգս, որոց անուանքն և արդիւնքն արգելն իսկ հրատարակեցան ի լրագիրս, և անօթք են հասարակութեան թայց առանձին զրուատեաց արժանի կը համա-

րիմբ զԵ. Մ. Տնաեսեան , շարականաց և խաղերու կարեւորովթին տալուն և նոցա վերայ ուսումնասիրած գովկեի քրովթեանցն համար , զորս հաւաքած է Նեփարագիր երդոց Հ . Եկեղեցոյ , տպ . 1895 . Կ . Պօլիս :

Ժամանակարգովթեան նոր հրատարակովթիւնը , որոյ վերայ մեծապէս աշխատուած է և մեծագոյն համբերովթին թափուած խաղեց ծցովթեան , եթէ՝ նոցա տեղեաց և թէ՝ ձեւոց նմանովթեան ընդ ձեռագիրս , որոց շատերը ամենեւին նորը են ցարդ ի տպագրեալ շարականաց , ինչպէս պիտի նշանակներ և յետոյ , յորդորեցին զմեզ այն աղօտ լցոն որ յաւահովովթենէ հասեալ էր առ մեզ , և մեր ըրած փոքր խուզարկովթինըը ծանօթացնել և հասարակովթեան , յուսով՝ որ զիտնագոյնը յարուեստի երաժշտովթեան , քան զմեզ մօտաւորագոյն մերձհեան նորա ճշմարիտ հասուողովթեան :

Բայց յառաջ քան զմեր մուսս ի խուզարկովթիւն հին Հայկական իսակերուն և նոցա զօրովթեանց , որովէնտեւ արզի երգահան վարժապետաց և նոցա զորոց և արդեանց յիշատակովթիւն մ'ըրինք՝ ներսուի մեզ խօսել նկելովայոս Ս . Թաշճեանի , Դասագիրք նեկեղեցական ճայնագրութեան Հայոց , տպագրեալ ի Վաղարշապատ՝ զրոց վերայ , որովէնտեւ մեծ և հիմնական յեղափոխութեան մի պատճառ եղան այն ազգային եկեղեցական երգեցողովթեան . նորա օրինօց տպագրեան եկեղեցական մատեանը , Շարական և Դարբովթեան զիրը , և անսնցմով կըլլայ եկեղեցական երգեցողովթեան ու սուցովթիւն :

Փափարելի է ինձ պարզ ճշմարտովթիւնն ի լցո հանեսու մոօց , և միանգամայն չըլանալու այնմ՝ որուն գիտն է արդարեն այն դասագրոց վարդապետովթիւնն , եթէ կայ արդինց և փառց մի այն հնարողովթեան մէջ , և յայնել թէ ինչ արձէք ընծայուած էր այն:

Մասնօթ է հասարակովթեան Հ . Մինաս Վ . Բժշկեան՝ իւր ժողովրդական զրերով , բայց եթէ անծանօթ ըլլայ ի բաղաբաց բաղաբաց նորա երգեցողովթիւնն , այլ ցայսօր կը յիշուի ի Տրապիզոն և ի բովանդակ

Տարիա նորա եկեղեցական երդոց ուսուցչովթիւնն , և ամօք յառաջ պատիւ ունեցանց բարձրաստիճան ազգային եկեղեցական և աշխարհիկ այցելուաց վանացա՞ց ցոյց տալ թժկեան Հօր ձեռագիր երաժշտութեան գիրըն , որ և Զայնագրովթիւնն :

Բժշկեան Հօր սոյն երկասիրովթիւնն յօրինուած է 1845 թուականին , ի կաթողիկոսովթեան Տնառն Եփրեմյա , որուն յառաջարանին մէջ կը կարգանց . «Ոմանց ուսումնակը զովելի ազգասիրովթեամբ միաբանեալ ձեռնառու եղել մեզ . մանաւանդ լրտահոգի Անտոն Զէկէսի Տիրեան , որպէս զի այն պիսի ոճով շարագրենց , որ ըլլայ ուսումնական , և միանգամայն զիրքը միանելի ամենեցուն» : Աստի կ'երեւի թէ Բժշկեան Հայրն ի Կ . Պօլիս յօրինուած է իւր երաժշտութեան զիրըը . և զի ունեցեր է իրեն ձեռնառու անձինը , Ճետեւարար հարկ է եղած զլանալ նոցա՝ յօրինուածոյն օրինակը . և այս օրինակովթեանց մին անցած պիտի ըլլայ Թաշճեան երգահանին ձեռքն . զամն զի իւր հրատարակած երգեցողովթեան աստիճանաց նըշանին և անուանին , ժամանակաց և հանգստից , ինչպէս Ճայնահանովթեան մանր զարդոց նշանին՝ նոյն են ամենեւին որ ինչ Բժշկեան Հօրն , և ուրիշ բանով չի զանազանիր , բայց զի նորա համառուսեան է և զամարդոց վերածեալ . և Բժշկեան Հայրն կը խօսի միանգամայն և կը բաղդատի մերը՝ տոճկական և արարական երգեցողովթեան հետ , և ժամանակին արեւելեան նուազարանաց յօրինման օրինաց վերայ : Եւ եթէ հաճյ և պիտանի համարուէր երկասիրովթիւնն ազգային երգահանաց՝ հնար զայն տպագրել :

Եթէ ոյ ինչ արգիւնք Թաշճեանի , յայնմ համարելի էր , որ Գէորգ կաթողիկոսի մեկնասաւովթեամբ տպագրել տրուեր են եկեղեցական մատեանը՝ նոյն կանոնոց . և զասապեց ծաւալմամբ , նոյն ուսուցչովթիւնը ընդհանրացունել աշխատուած է ազգին մէջ : Բայց ներուի մեզ ըսուել թէ այս վերջինն ըսուած արգիւնքն եւս՝ կառաւ յառաջաղիւովթեան հայկական երգոց համարելի է :

Մեր Հայատարակեցինց Բժշկեան Հօր երկասիրովթեան զիւար , վամն զի հայկական

ձայնագրութիւն անուամբ հրապարակ եղած ժամանակից պիտի կրեր արդարեւ հայկական սակաւ ինազից ձևերը, բայց բոլորովին օտար կերպարանոք, օտար զօրովիթեամբ, օտար տեսզովիթեամբ, վերջապէս այնչափ օտար հայկական ձայնագրութիւն ըլլալէն, որ եթէ այն խազից առաջնին հնարող և ի գործ ածոյ կրտսելի Հայրապետքն մեր Սահակ, Մեսրոպից, Խորենացի, Շնորհալի... բովանդակ Հայրապետաց խորով յանեն ի գերեզմանց բացարձակ պիտի շկարենան ճանչնալ զանոնք. այլ հարկ է որ ընդ ձեռամբ այլ նորագիւա հնարողին աշակերտին՝ որ կարենան իրենց յօրինած շնչար ընարերդ շարականքն երգել. Այսպէս, ոչ թէ հայկական խազից կատարելութիւն մի արուած կը համարիմք, այլ զանոնք տակն ու վրայ արած է խանգարած. և եթէ խազից զօրովիթեան օրինաց մէջ կար հին տիպար մի կատարեալ կամ անկատար՝ այն ալ բարձուած է:

Եթէ լուծենք այդ եկեղեցական ձայնագրութիւն Հայոց ըսուած զիւտը՝ ոչ այլ ինչ պիտի զանոնք, բայց արդի եւրոպական նօթայից վարդապետութիւնն, յարմարած հայկական բանի մը խազերու ձեւոց: Ըսածնի պարզելու համար զննենց կարգաւ զիւտոր կանոնքն և նոցա զօրովիթինքը դէմ առ զէմ:

Ն Ե Ա Ն Ք Ա Ս Տ Ւ Ճ Ա Ն Ա Յ
ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՆԵՐԱԿ

Ut,	Do	Փուշ	/	փօ
Re	Եկործ	^	է	
Mi	Վերնախաղ	"	կէ	
Fa	Բենկործ	^	բէ	
Sol	Խորովային	~	խօ	
La	Ներքնախաղ	~	նէ	
Si	Պարոյկ	^	պա	

Ն Ե Ա Ն Ք Տ Ե Խ Ո Ղ Ո Ւ Թ Ե Ա Ն (ամանակաց)

Semibreve	○	Սուշ	/	փօ
Minima	○	Զոյգկէտ	..	
Semiminima	○	Կէտ	.	
Croma	○	Ստորակէտ	,	
Semicroma	○	Երկստոր	..	
Bisecroma	○	Ծունկ	○	
Semibisecroma	○	Ծնկներ	○	

Ն Ե Ա Ն Ք Հ Ա Ն Գ Ս Ի Ց Կ ա մ Ձ ա յ ն ն հ ա տ ք	
գծին տակը	Սուշ
գծին վրայ	Զոյգկէտ
	Կէտ
	Ստոր
	Երկստոր
	Ծունկ
	Ծնկներ

Կ Ի Ս Ա Զ Ա Յ Ն

Diesis ♭ Երկար ~, կը դրուի ձայնանշին վրայ
Ա Մ Ա Ն Ա Կ :

tempo Վերջակէտ:

Ահաւասիկի ի համառոտ պատկերիս ձայնագրութեան զիւտոր կանոնքն, բաց ի մանոնց ինչ, որը և անկատար են ըստ մեզ. ուր յայնապէտ կը տեսնուի թէ անուած են հայկական քանի մի խազը միայն և դրուած եւրոպական երաժշտութեան զարգացման նօթայից զիւտոր բան մը զնելու համար. Միթէ զծի բազմակերպ գարձուած կը պակասէր նոյն զործը յառաջ բերելու. Ինչ հայկականութիւն կամ ամորդայուր հնչեն կայ, փոխանակ ուսանողաց, տօ, ոէ, մի, փա, սօլ լա, սի՝ ըսել տալու՝ փօ, է, վէ; բէ, խօ, նէ, պա՝ ըսել տալ: Թերեւս եւրոպականէն նորջելու տենչն յայն մլած ըլլայ, կամ որ և է կերպիւ հայկական հետք մի նշարուի այն ձայնագրութեան վրայ: Եւ ահաւասիկ աստ է և մեր ցաւը, զի եթէ ընդհանրանց և յարատեէ այն ձայնագրութիւնը, օր պիտի գայ, որ Սահակայ և Մեսրոպ-պայ ձայնագրութիւնը խապու անհետ պիտի ըլլայ, և անյուշ պիտի թաղուին խազերու զիտութիւնը և առաջնորդութիւնը, որոնք միայն են ճշմարիս աւանդապահը շարականաց ճզզրիտ երգեցողութեան. և այնուհետեւ ըստ աշխարհաց և ազգաց՝ մատ պիտի զանեն արարական, տաճկական, եւրոպական կերպարանց երգեցողութեան ջնջելով զհայկականը և ազգայինը. քանի տիուր հետեւանք:

Այս ամենայն եղծմանց և պէս պէս զրկմանց առջևն առնելու համար, նչ լաւ եւս էր առնուց ուղղակի եւրոպական նօթայից ձայնացութիւնը, որով նուրբական, անարատ, անազդրաւ կը մնային մեր Հարց յիշատակիք, և ամենեցուն և ամենուրեք ընթեանիկ և մատչելի կը լինէին, որով կը յագնիար զաղթականաց իրաւացի տենչը, զիտնալ թէ ինչպէս կը նուագուին իր սրբազն Հարց շարականին և պատրապն ի ծննդավայր հայրենին յաղըիւն նախնարուփու. կը գտնէին ի նման և եւրոպական երգահանք իրենց նորորով մը՝ մէջէն հանելու նորանոր Այստաներ:

Եւ ի՞նչ կար խորչելի, մինչդեռ ոչ մի տպզի սեփականութիւն է այն, և ամենը նոյն նօթայով կը նուազեն. Ոչ մի ազգ կը հրաժարի երթեք իր մայրենի լեզուէն և անոր յատոկ զրութենին, որոր կը ճանչնայ կնիք և պահապան ազգութեան. իսկ երգ ու ձայնն որ հասարակաց բարրտու մ'է ի բնութենէ մինչ նոյնը կ'իմանայ և կը զզայ ամենայն ազգ տիրազին երածշտութենէ ինչպէս ուրախական նուազէ, մինչ կատարեալ զրութիւն մ'ալ ընդհանրացած է ծանօթ և ընթեանի հասարակաց, ինչ նշանակութիւն ունի անոր նմանակերպ ստեղծագործութիւն մը, և ընդէ՛ր նորս զրութիւնն լըլլայ հասարակաց զրութեամբ, լըլլայ եւրոպական նօթայից :

Շարացարեի



Կ. ԳԻՐՔԵԼՄԱՆ ԵՒ “ԳԻՐՔ ՎԱՍՏԱԿՈՅ, Ի

ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱԿԱՌԻԹԻԿԱՆ

— — — — —

(Ծար. տես էջ 4)

ՍԵ Ր նախորդ յօդուածին մէջ յայտնի տեսանի՝ որ ըստ Պօրեկմանի, զրոց հայերէն թարգմանութիւնն եղած է ի Հետաստան և ոչ թէ ի կիբէկիս, ինչպէս այլ պատկանի ազգային բանասէրը հաւաստեր լին. Բայց մնեն առ այժմ չենք փութար ըննապատել պատել Պօրեկմանի այս նոր կարծեաց հաս-

տատութիւնը կամ ստուգութիւնը, այլ նախ պիտի ջանանց ներկայ յօդուածովս ներկայացնել զերմանացի ըննապատին միւս ենթադրութիւնները զրոց հայ թարգմանութեան ժամանակին և բնազրի մասին, և ապա գնահատել իւր կարծիքները:

Վերապոյն ի մէջ բիրինք Վ. Հ. Ալշանի կարծիքը թարգմանութեան ժամանակին նկատմամբ, «Ժամանակի թարգմանութեան կարծեմ զգի զար վաղապայն քան անապան»: Խոկ Պօրեկման այս կարծեաց հակառակ զինուելու համար կ'իջն լեզուական ասպարիգին մէջ. — և այս տեսակէեալ ըննութեան բույայն անցրնելով զթարգմանութիւնու այսպէս կը կնքէ իւր կարծիքը. «Առ այժմ կը համարիմ թէ նա միջն զարէն շատ եւըը կատարուած՝ թարգմանութիւն մ'է: — իւր փաստերը՝ հետեւեալ տողից մէջ կ'ամփութենք»:

Վասն զի, կը զրէ, զրոց հայերէն լեզուն շատ ուամիկ է. — բայց, կը յաելու, այժմեան ըննապատութեանու ունեցած վիճակին մէջ այս թարգմանութեան լեզուական բնադրութիւն ստոյդ փաստ մը չէ կարելի հանել անը ժամանակը սահմանելու համար, որ բիշեան Միկմար Հերացւոյն ալ Զերմանց զիրցն ընտիր լեզուով չէ, թէպէտ և այն յամին 1484 յօրինուած է արարական աղբիւներէ: Բաց աստի, հայերէն լեզուի իւրաքանչիւր զարոց մէջ կրած յառաջազէմ կամ յետագէմ փոփառութեանց պատմութեանը ըննապատական մը չունինք՝ որ հիմնուած ըլլայ ժամանակագրական, մատենագրական, զիւնականութական փաստերու վրայ. Թէպէտ և այսպիսի ըննապատական մ'ալ պիտի չիարենար նպաստել մեր ըննապատեան. վասն զի զրոց հայ թարգմանին յայտնապէս կը ջանայ տեղ տեղ ընտիր լեզու զրութածել, բայց ստոպիս երբեք չի յաջողիքը³!: Գրոց մէջ յիշատակութեան ար-

1. Byzantinische Zeitschrift. Fünfter Band. Leipzig. 1896. էջ 388.

2. Նոյն. էջ 587...

3. Հմայ. Հանդէն Ամսորեայ, 1889. դի. 1-2: